

3238

sgm

ՓՐԿՈՒԹԵԱՆ

ՃԱՄԲԱՆ

21  
Մ - 91

21

Դ-91

ՓՐԿՈՒԹԵԱՆ  
ՃԱՄԲԱՆ

sgm

Scripture Gift Mission  
ECCLESTON STREET, LONDON, SW1W 9LZ  
*Printed in Great Britain*

28 AUG 2013

Աստուծոյ խօսքը կենդանի է ու  
զօրեղ, եւ ամէն երկսայրի սուրէ  
կտրուկ:

Եթր. Գ. 12

Իմ խօսքս . . . ինչի պարապ սլի.  
տի չդառնայ, հապա իմ կամքս  
սլիտի կատարէ ու յաջողու.  
Թեամբ ի գործ դնէ այն բանը,  
որու համար զանիկա դրկեցի:  
Եսայ. ԾԵ. 11

Քու խօսքերուդ յայտնուիլը լոյս  
կուտայ:

Սաղմ. ՃԵԹ. 130

«Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է»:

Ս.Ժամարի ստեղծագործութիւնը  
Սկիզբէն Աստուած երկինքն ու եր-  
կիրը ստեղծեց: Մննդ. Ա. 1

Ամէն բան Անով (Բանով) եղաւ, եւ  
առանց Անոր բան մը չեղաւ. ինչ որ  
եղաւ: Ցովի. Ա. 3

Մարդուն ստեղծուիլը  
Աստուած իր պատկերով ստեղծեց  
մարդու Աստուծոյ պատկերով ստեղ-  
ծեց զանիկա. արու եւ էգ ստեղծեց  
զանոնք: Մննդ. Ա. 27

Տէլ Աստուած գետնին հողէն շինեց  
մարդը, եւ անոր ոնդունքներուն կեն  
դանութեան շունչ փշեց ու մարդը  
կենդանի հոգի եղաւ: Եւ Տէլ Աստ-  
ուած արեւելքին կողմը եղեմի մէջ  
պարտէզ տնեկեց ու իր շինած մարդը  
հոն դրաւ: Մննդ. Բ. 7. 8

Տէր Աստուած առաւ մարդը, ու Ե-  
ղեմի պարտէզին մէջ դրաւ, որպէս զի  
զանիկա գործէ ու պահէ: Եւ Տէր  
Աստուած պատուիրեց մարդուն՝ լսե-  
լով. պարտէզին ամէն ծառէն համար-  
ձակ կեր. բայց բարւոյ ու չարի գի-  
տութեան ծառէն մի ուտեր. քանզի  
այն օրը որ անկէ ուտես, անշուշտ  
պիտի մեռնիս:

Ծննդ. Բ. 15-17

### Մեղին ծագումը

Տէր Աստուծոյ ըրած դաշտի բոլոր գա-  
զաններէն աւելի խորամանկ էր օձը.  
ու կնոջ լսաւ. իրաւ Աստուած լսա՞ւ  
թէ պարտէզին ամէն ծառէն պիտի  
չուտէք: Եւ կինը օձին լսաւ, պարտէ-  
զին ծառերուն պտուղէն կ'ուտենք.  
բայց պարտէզին մէջտեղը եղած ծա-  
ռին պտուղէն Աստուած լսաւ, անկէ  
մի ուտէք եւ անոր մի դպչիք, որպէս

զի չմեռնիք: Եւ օձը կնոջ լսաւ, ոչ  
թէ անշուշտ պիտի մեռնիք, քանզի  
Աստուած գիտէ թէ այն օրը որ ան-  
կէ ուտէք, աչքերնիդ պիտի բացուին.  
Եւ աստուածներու պէս պիտի ըլլաք՝  
բարին ու չարը գիտնալով: Եւ կինը  
տեսնելով որ ծառը աղէկ էր կերա-  
կուրի համար, եւ հաճելի՝ աչքերուն.  
ու փափաքելի՝ իմաստուն ընելու հա-  
մար, առաւ անոր պտուղէն ու կերաւ,  
եւ իրեն հետ իր էրկանն ալ տուաւ, եւ  
անիկա կերաւ:

Ծննդ. Գ. 1-7

Տէր Աստուած լսաւ կնոջ, ի՞նչ է այս  
քու ըրածդ. Եւ կինը լսաւ, օձը զիս  
խարեց, ու ես կերայ: Եւ Տէր Աստուած  
օձին լսաւ, զայս ընելուդ համար՝ ա-  
մէն անասուններէն եւ դաշտի ամէն  
գազաններէն անիծեալ ըլլաս. փորիդ  
վրայ քալես. ու կեանքիդ բոլոր օրե-

ըլ հող ուտես եւ քուկին ու կնոջ մէջտեղ, եւ քու սերունդիդ ու անոր սերունդին մէջտեղ թշնամութիւն պիտի դնեմ. Ան քու զլուխդ պիտի ջախջախէ, եւ դուն Անոր գարշապարը պիտի խայթես: Եւ կնոջ ըսաւ, քու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցընեմ. ցաւով զաւակ ծնանիս, ու Էրկանդ հնազանդ ըլլաս, ու անիկա քու վրադ իշխէ: Եւ Ադամի ըսաւ, որովհետեւ դուն քու կնոջդ խօսքը մտիկըրիր. եւ այն ծառէն կերար, որու համար պատուիրեցի քեզի ըսելով. չուտես անկէ. երկիր քու պատճառաւրդ անիծեալ ըլլայ կեանքիդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուտես անկէ. եւ փուշ ու տատասկ բուսցնէ քեզի, եւ զաշտին խոտը ուտես: Երեսիդ քրտինքովը ուտես քու հացդ, մինչեւ գետինը դառնալդ, ուրկէ առնուեցար.

քանզի հող էիր դուն ու հողի պիտի դառնաս:

Ծննդ. Գ. 13-19

Եւ վար ձգուեցաւ մեծ վիշապը, այն առաջուան օձը, որ Բանսարկու ու Սատանա կ'ըսուի:

Յայտ. Ժ. 9

Վասնզի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, եւ այն մեղքէն մահը. եւ այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնը մեղանչեցին,

Հռով. Ե. 12

Ասուծոյ հանդեա մարդուն  
յանցապարտութիւնը

Ամէնս ոչխարներու պէս մոլորեցանք.  
ամէն մէկս իր ճամբան դարձաւ:  
Կսայ. ԾԳ. 6

Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ. որպէսզի տեսնէ թէկա՞յ արդեօք իմաստուն մէկը որ զԱստ.

ուած փնտոէ: Ամէնը խոտորեցան. մէկտեղ անպիտան եղան: Սաղ. ժդ. 2, 3

Արդար մը չկայ, եւ ոչ մէկ: Խաղադութեան ճամբան չճանչցան: Աստուծոյ վախը չկայ անոնց աչքերուն առջեւ: Ամէնը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսած են

Հռով. դ. 10, 17, 18, 23

Գիրքը ամէնը մեղքի տակ գոցեց:  
Կաղ. դ. 22

### Աստուծոյ սէրը մարդոց հանդէա

Աստուած անանկ սիրեց աշխարհը մինչեւ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսըլի, հապա յաւիտենական կեանք ունենայ:

Ցովի. դ. 46

Աստուծոյ սէրը մեր վրայ յայտնի եղաւ, որ Աստուած իր Միածին Որդին աշխարհ զրկեց, որպէսզի Անոր

միջոցով ապրինք: Այս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուծութեան հապա որ Անիկա մեզ սիրեց, ու իր Որդին զրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու: Ա. Ցովի. դ. 9, 10

### Աստուծոյ Որդւոյն աշխարհ

գալը

Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու:

Ա. Տիմ. Ա. 15

Յիսուս Քրիստոս . . . կերպարանքովը մարդու պէս գտնուելով ինքզինք խոնարհեցուց: Փիլիպ. Բ. 7, 8

Թանը . . . աշխարհի մէջ էր, աշխարհ Անով եղաւ . . . ու աշխարհ զԱնիկա չճանչցաւ:

Ցովի. Ա. 1, 10

## Ա.նոր ծնունդը

Յիսուս Քրիստոսի ծնունդը այս կերպով էր . . . եւ այս ամէնը եղաւ որպէսզի կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռքով որ կ'ըսէ, ահա կոյսը պիտի յդանայ ու Որդի պիտի ծնանի, եւ Անոր անունը էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ:

Մատթ. Ա. 18. 22, 23

Անոր անունը Յիսուս Պանզի Անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ: Մատթ. Ա. 21

## Ա.նոր երկրաւոր կեանիը

Յիսուսը որ Նազարէթէ էր, զոր Աստուած օծեց Սուրբ Հոգիով եւ զօրութիւնով, որ պտըտեցաւ բարիք ընելով եւ Սատանայէ բոլոր տանջուածները բժշկելով:

Գործ Ճ 38

Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաքները ու գեղերը եւ անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր ու կը քարոզէր արքայութեան աւետարանը եւ կը բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ: Մատթ. Թ. 35

Շատ ժողովուրդներ իրեն եկան, որոնք իրենց հետ ունէին կաղեր, կոյրեր, հաշմանդամներ եւ ուրիշ շատեր, ու ձգեցին զանոնք Յիսուսի ոտքը, եւ բժշկեց զանոնք: Մատթ. Ժ. 30

## Ա.նոր ժաշարաց մանր

Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի ու խաչը ելլէ: Ղուկ. Ի. 7

Երբ Գագաթ ըսուած տեղը գացին, հոն խաչը հանեցին զԱնիկա, եւ Յիսուս ըսաւ, Հայր, թողութիւն տուր ատոնց, վասնզի չեն գիտեր ի՞նչ կ'ընեն: Ղուկ. Ի. 33, 34

Անիկա մարդոցմէ անարգուեցաւ ու  
երեսէ ձգուեցաւ, վիշտերու տէր ու  
ցաւերու տեղեակ եղաւ, իրաւցնէ Ա-  
նիկա մեր ցաւերը վերցուց ու մեր  
վիշտերը իր վրայ առաւ, եւ մենք  
զԱնիկա վիրաւորուած. Աստուծմէ  
զարնուած ու չարիքի հանդիպած  
սեպեցինք: Բայց Անիկա մեր մեղքե-  
րուն համար վիրաւորուեցաւ, եւ մեր  
անօրէնութիւններուն համար ծեծուե-  
ցաւ . . . Անոր վէրքերովը մենք բը-  
ժշկուեցանք: Ամէնս ոչխարներու պէս  
մոլորեցանք: ամէն մէկս իր ճամբան  
դարձաւ, եւ Տէրը մեր ամենուն անօ-  
րէնութիւնը Անոր վրայ դրաւ: Անի-  
կա իմ ժողովուրդիս յանցանքին հա-  
մար զարնուեցաւ, եւ Անոր գերեզմանը  
ամբարիշտներուն հետ դրուեցաւ, բայց  
երբ մեռաւ, հարուստին հետ եղաւ.  
Քանզի Անիկա անօրէնութիւն մը չը

գործեց, ու Անոր բերնին մէջ նենգու-  
թիւն մը չգտնուեցաւ: Քանզի իր ան-  
ձը մահուան մատնեց, ու յանցաւորնե-  
րուն հետ սեպուեցաւ, եւ շատերուն  
մեղքը վերցուց, ու յանցաւորներուն  
համար միջնորդութիւն ըրաւ:

Կսայ. ԾԴ. 3-6, 8, 9, 12

Քրիստոս մեր մեղքերուն համար մե-  
ռաւ, գիրքերուն ըսածին համեմատ:

Ա. Կոր. ԺԵ. 3

Յիսուս նորէն ըսաւ անոնց . . . Ես եմ  
բարի հովիւը, բարի հովիւը իր կեան-  
քը ոշխարներուն համար կը դնէ . . .  
ուրիշ ոշխարներ ալ ունիմ որոնք այս  
բակէն չեն, զանոնք ալ պէտք է որ բե-  
րեմ, ու իմ ձայնիս պիտի լսեն, եւ  
եւ պիտի ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ:

Ցովի. Ժ. 7, 11, 16

**Անոր յարութիւնն ու երկինք  
համբառնալը**

**Այսպէս գրուած է, եւ այսպէս պէտք է  
Քրիստոսի չարչարուիլ, ու երրորդ օրը  
մնոելներէն յարութիւն առնել. Եւ Անոր  
անունովը մեղքերու թողութիւն քա-  
րոզուիլ բոլոր ազգերուն: Ղուկ իդ. 48-47  
**Աստուած զԱնիկա երրորդ օրը յա-  
րուց, եւ յայտնի ըրաւ զԱնիկա: Ոչ թէ  
բոլոր ժողովուրդին, հապա մեղի, ա-  
ռաջուընէ Աստուծմէ վկայ բլալու ըն-  
տըրուածներուս:** Գործ Ժ. 40, 41  
Ինքզինք ցուցուց կենդանի իր չարչա-  
րանքներէն ետեւ շատ ապացոյցներով.  
Քառասուն օրուան մէջ անոնց երեւնա-  
լով ու Աստուծոյ թագաւորութեանը  
վրայ խօսելով . . . ու մինչ անոնք կը  
նայէին, համբարձաւ, եւ ամպ մը զԱ-  
նիկա անոնց աչքերէն առաւ:**

Գործ Ա. 3, 9

**Աստուած մարմինով յայտնուեցաւ, Հո-  
գիով արդարացաւ, հրեշտակներուն ե-  
րեւցաւ, հեթանոսներուն մէջ քարոզ-  
ուեցաւ, աշխարհի մէջ հաւտացուեցաւ,  
ու փառքով համբարձաւ: Ա. Տիմ. Գ 16**

**Քրիստոս մնոելներէն յարութիւն առած  
է. ննջեցեալներուն առաջին պտուղը:  
Քանզի որովհետեւ մարդով եղաւ մա-  
հը. մարդով ալ մնոելներու յարութիւնը  
վասնզի ինչպէս Աղամով ամէնը կը  
մեռնին. նոյնպէս Քրիստոսով ամէնը  
կենդանի պիտի ըլլան: Ա. Կոր ԺԵ. 20-22**

**Աստուծոյ փրկութեան ճամբան**

**Ինձի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ:  
Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի եւ  
պիտի փրկուիս:** Գործ. ԺԶ 30-31

**Ապաշխարեցէք ու դարձի եկէք, որ-  
պէսզի մեղքերնիդ ջնջուի: Գործ Գ 19**

Ապաշխարեցէք ու ձեզմէ ամէն մէկը  
թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անու-  
նովը մեղքերու թողութեան համար, եւ  
Հոգւոյն Սրբոյ պարգեւը պիտի ընդու-  
նիք:

Գործ. Բ. 38

Եթէ խոստովանինք մեղքերնիս. հա-  
ւատարիմ ու արդար է Անիկա մեր  
մեղքերուն թողութիւն տալու, եւ մնա  
բոլոր անիրաւութենէ սրբելու:

Ա. Յովի. Ա. 9

Եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոս-  
տովանիս ու սրտիդ մէջ հաւատաս թէ  
Աստուած զԱնիկա մեռելներէն յա-  
րուց, պիտի փրկուիս. վասնզի սրտով  
կը հաւատայ մէկը արդարանալու, եւ  
բերնով կը խոստովանի փրկուելու:

Հուով. Ժ. 9, 10

Շնորհով փրկուած էք դուք հաւատ-  
քի միջոցով. եւ այս ոչ թէ ձեզմէ է,  
հապա Աստուծոյ պարգեւն է, ոչ թէ  
գործերէն, որ մէ'կը չպարծի:

Եփես. Բ. 8, 9

Քանզի ով որ Տէրոջը անունը կան-  
չէ, պիտի փրկուի: Հուով. Ժ. 13

Ան որ ինծի կուգայ, բնաւ դուրս  
պիտի չհանեմ: Յովի. Զ. 37

Այս է յաւիտենական կեանքը, որ  
ճանչնան Քեզ միմիայն ճշմարիտ Աստ-  
ուածդ, ու Յիսուս Քրիստոսը զոր  
Դուն զրկեցիր:

Յովի. Ժէ. 3

Անոր արեամբ եղած  
փրկութիւնը

Հիմա Քրիստոս Յիսուսով դուք որ ա-  
տեն մը հեռաւոր էիք, մերձաւոր ե-  
ղաք Քրիստոսի արիւնովք:

Եփես. Բ. 13

Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն  
մեղքէ կը սրբէ:

Ա. Յովի. Ա. 7



17

Հայրը հաճեցաւ որ Աստուածութեան  
բոլոր լեցունութիւնը Անոր մէջ բընա-  
կի, եւ Անով ամէնը հաշտեցնէ իրեն  
հետ, խաղաղութիւն ընելով Անոր խա-  
չին վրայ թափած արիւնովը:

Կողս. Ա. 19, 20

Դիտնալով որ դուք ոչ թէ ապակա-  
նացու արծաթով կամ ոսկիով փըր-  
կըւեցաք . . . հապա Քրիստոսի պատ-  
ուական արիւնովը:

Ա. Պետ. Ա. 18, 19

Որով փրկութիւն ունինք մենք իր  
արեանը միջոցով, մեղքի թողութիւնը՝  
իր շնորհքին ճոխութեան չափովը:

Ելիւս. Ա. 7

Քանզի հոգիին համար քաւութիւն  
ընողը արիւնն է:

Ղեւտ. Ժ. 11

Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա  
նոր ստեղծուած մըն է. հիները անցան  
եւ ահա ամէն բան նոր եղաւ,  
Բ. Կորն. Ե. 17

### Սուրբ Հոգին

Ես ալ Հօրը պիտի աղաչեմ, եւ ուրիշ  
Միսիթարիչ մը պիտի տայ ձեզի, որ-  
պէսզի յաւիտեան ձեզի հետ բնակի.  
Ճշմարտութեան Հոգին, զոր այս աշ-  
խարհը չկրնար ընդունիլ. վասն զի  
չտեսներ զԱնիկա, ու չճանչնար զԱ-  
նիկա, բայց դուք կը ճանչնաք զԱ-  
նիկա. վասնզի ձեր քով կը բնակի եւ  
ձեր մէջ պիտի ըլլայ: Յովի. Ժ. 16, 17

Միսիթարիչը, Սուրբ Հոգին, զոր Հայրը  
իմ անունովս պիտի զրկէ. Անիկա ձե-  
զի բոլորը պիտի սորվեցնէ:

Յովի. Ժ. 26

Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրտմեց-  
նէք. որով դուք կնքուեցաք փրկու-  
թեան օրուանը համար:

Եփես. Դ. 30

Հոգիով գացէք. ու մարմինին ցան  
կութիւնը պիտի չկատարէք:

Գաղ. Ե. 16

Որոնք որ Աստուծոյ Հոգիովը կ առաջ  
նորդուին, անոնք Աստուծոյ որդիներն  
են:

Հռով. Ը. 14

Հոգիով լիցուեցէք:

Եփես Ե. 18

Հոգիին պտուղը այս է. սէր. խնդու-  
թիւն, խաղաղութիւն, երկայնմտու-  
թիւն, քաղցրութիւն, բարութիւն, հա-  
ւատարմութիւն, հեզութիւն, ժուժ-  
կալութիւն. այսպիսի բաներու դէմ  
օրէնք չկայ:

Գաղտ. Ե. 28, 23

## Մբութիւնը

Աստուծոյ կամքը այս է, այսինքն ձեր  
սուրբ ըլլալը:

Ա. Թես. Դ. 3

Սրբէ զանոնք Քու ճշմարտութիւնովդ,  
Քու խօսքդ ճշմարտութիւն է:

Ցովի. ԺԷ. 17

Ան որ կը սրբէ ու ան որ կը սրբը-  
ւի, ամէնն ալ մէկէ են. անոր հա-  
մար ինք ամօթ չսեպեր եղբայր կոչել  
զանոնք:

ԵԲԲ. Բ. 11

Դուք ձեր անձերը մեղքի մեռած սե-  
պեցէք, բայց Աստուծոյ կենդանի. մեր  
Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքով:

Հռով. Զ. 11

Բայց հիմա մեղքէ ազատուած, Աս-  
տուծոյ ծառաներ եղած. ձեր պտու-  
ղը ունիք սրբութիւնով, ու կ'երջը յա-

ւիտենական կեանք: Հռով. Զ. 22

Եւ ինք խաղաղութեամն Աստուածը  
ձեզ բոլորովին սուրբ ընէ. Եւ ձեր  
բոլոր հոգին եւ շունչը ու մարմինը  
անարատ պահուի մինչեւ մեր Տէր  
Յիսուս Քրիստոսի գալու ատենը:  
Հաւատարիմ է Ան որ ձեզ կանչեց  
ու պիտի կատարէ ալ: Ա. Թես Ե. 23, 24

### Ա.Ղօթէլ

Իմ անունովս ինչ որ խնդրէք պիտի  
կատարեմ զանիկա. որպէսզի Հայրը  
Որդիովը փառաւորաւի. եթէ իմ անու-  
նովս բան մը խնդրէք, զանիկա պիտի  
կատարեմ: Գովիթ. ԺԴ. 13, 14

Եթէ դուք իմ մէջս կենաք, եւ իմ խօս-  
քերս ձեր մէջ կենան. ինչ որ ուզէք  
պիտի խնդրէք. ու պիտի ըլլայ ձեզի:  
Գովիթ. ԺԵ. 7

Խնդրեցէք ու պիտի առնէք. որպէս զի  
ձեր ուրախութիւնը լման ըլլայ:  
Ցովի. ԺԶ. 24

Ինչ բան որ աղօթքով կը խնդրէք. հա-  
ւատացէք թէ պիտի առնէք ու պիտի  
ըլլայ ձեզի: Մարկ. ԺԱ. 24

Ամէն աղօթքով ու խնդրուածքով. ա-  
մէն ատեն աղօթք ըրէք հոգիով. ու  
այս բանին վրայ հսկեցէք կատարեալ  
յարատեւութեամբ ու աղաչանքով բո-  
լոր սուրբերուն համար: Եփես. Զ. 18

Անդադար աղօթք ըրէք: Ա. Թես Ե 17

### Տառապանի ծառայութիւնը

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. եթէ  
մէկը իմ ետեւէս գալ կուզէ. թող իր  
անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ  
ու իմ ետեւէս գայ: Մասոթ ԺԶ 24

Աստուած կարող է բոլոր շնորհքները  
ձեզի առատօրէն տալ, որպէսզի ամէն  
բանի մէջ ամէն ատեն բոլոր ձեզի  
պէտք եղածը ունենալով ամէն բարի  
գործերով առատանաք:

Բ. Կոր. Թ. 8

Հաստատ եղէք. անշարժ կեցէք եւ  
ամէն ատեն աւելցէք Տէրո՞ջը գործին  
մէջ. զիտնալով որ ձեր աշխատութիւ-  
նը պարապ չէ Տէրոջմով:

Ա. Կոր. ԺԵ. 58

Ձեզի տրուեցաւ Քրիստոսի համար  
ոչ թէ միայն Անոր հաւատալ. հա-  
պա Անոր համար չարչարուիլ ալ:

Փիլիպ. Ա. 29

Եթէ արդարութեան համար չարչար-  
ուիք, երանելի էք. եւ անոնց ահէն  
մի վախնաք ու մի շփոթիք:

Ա. ՊԵ. Դ. 14

Եթէ Քրիստոսի անուանը համար նա-  
խատուիք, երանելի էք. վասնզի փա-  
ռաց եւ Աստուծոյ Հռգին ձեր վրայ  
հանզչած է: Ա. ՊԵ. Դ. 14

Աստուած կուալաւութիւնը

արզիլած է

Ես եմ Եհովա քու Աստուածդ Ինծ.  
մէ զատ ուրիշ աստուածներ չունե-  
նաս. դուն քեզի կուոք չշինես ոչ ալ  
վերը երկինքի մէջ կամ վարը երկրի  
վրայ: Անոնց երկրապութիւն չընես  
ու զանոնք չպաշտես. վասնզի Ես  
քու Տէր Աստուածդ նախանձու Աստ-  
ուած եմ: Ելից Ի. 2-5

Ազգերուն բոլոր աստուածները կուո-  
քեր են, բայց Եհովա երկինքը ստեղ-  
ծեց: Սաղմ. ՂԶ. 5

Գիտենք որ կուռքը ոչինչ է աշխարհի  
մէջ. եւ որ մէկէն զատ ուրիշ Աստ-  
ուած մը չկայ:

Ա. Կոր. Ը. 4

Մենք մէկ Աստուած ունինք. Հայրը.  
որմէ են ամէն բաները. եւ մենք ալ  
Անով. ու մէկ Տէր Յիսուս Քրիստոս որ-  
մէ են ամէն բաները. ու մենք ալ Անով:

Ա. Կոր. Ը. 6

Յիսուս ըստ անոր. ետիս գնա՝ Սա-  
տանա. վասնզի գրուած է թէ քու  
Տէր Աստուծոյդ երկրագութիւն ընես  
ու միայն զԱնիկա պաշտես:

Մատթ. Դ. 10

Չեր երկրաւոր անդամները սպաննե-  
ցէք. պոռնկութիւնը. պղծութիւնը.  
անսանձ կիրքը. չար ցանկութիւնը եւ  
ազահութիւնը որ կռապաշտութիւն է  
որոնց համար Աստուծոյ բարկութիւնը

26

անհնազանդութեան որդիներուն վրայ  
կուգայ: Կոլ. Դ. 5, 6

Աստուծոյ փրկութիւնը զանցառելու  
վտանգը

Մենք ինչպէ՞ս պիտի ազատինք եթէ  
անհոգ լլլանք այսպիսի մեծ փրկութե-  
նէ մը: Եբ. Բ. 3

Ան որ Որդւոյն կը հաւատայ յաւի-  
տենական կեանք ունի. ան որ Որ  
դւոյն չհնազանդիր. անիկա կեանք  
պիտի շտեսնէ. հապա Աստուծոյ բար-  
կութիւնը անոր վրայ կը մնայ:

Ցուլի Դ. 36

Ո՞վ իմացուց ձեզի գալու բարկութե-  
նէն փախչիլ: Վուկ. Գ. 7

Ան որ կը յաղթէ. ամէն բաները պի-  
տի ժառանգէ. ու ես անոր Աստուած  
պիտի լլլամ. ան ալ ինծի որդի պի-  
տի լլլայ. բայց վախկոտներուն ու  
անհաւատներուն եւ պիղծերուն ու մար-

27

դասպաններուն; ու պոռնիկներուն, եւ  
կախարդներուն, ու կուպաշտներուն,  
եւ բոլոր ստախօսներուն բաժինը կը-  
րակով ու ծծումբով վառած լիճին մէջ  
պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը:

Յայտ. ԻԱ. 7, 8

### Զարիմէն եւ Սատանայէն ազատում

Խաղաղութեան Աստուածը խորտակէ  
Սատանան շուտով ձեր ոտքերուն տակ:  
Հռով. ՃԶ. 20

Գոհանալով Հօր Աստուծմէ . . . որ մեզ  
ազատեց խաւարին իշխանութենէն, ու  
իր սիրելի Որդւոյն թագաւորութեանը  
փոխադրեց:

Կողս. Ա. 12, 13

Աստուծոյ Որդին յայտնուեցաւ որ Սա-  
տանայի գործերը քակէ:  
Ա. Յովհ. Գ. 8

Մեր Տէր Յիսուս Քրիստոս . . . իր ան-  
ձը տուաւ մեր մեղքերուն համար, որ-  
պէսզի մեզ փրկէ հիմակուան չար աշ-  
խարհէն Աստուծոյ ու Հօրը կամքին  
համեմատ, որու փառք յաւիտեանս  
յաւիտենից: Կաղա. Ա. 3-5

Ձեր վրայ հագէք Աստուծոյ սպառա-  
զինութիւնը, որպէսզի կարող ըլլաք  
Սատանայի հնարքներուն դէմ զնեւ,  
Եփես Զ. 11

Գոհութիւն Աստուծոյ որ մեզի յաղ-  
թութիւն կուտայ Յիսուս Քրիստոսի  
ձեռքով: Ա Կորն. ՓԵ. 57

Տէր Յիսուս Քրիստոսի  
Երկրորդ գալուստը

Նորէն կուգամ եւ ձեզ քովս կառնեմ.  
որպէսզի ուր Ես եմ դուք ալ հոն ըլլաք:  
Յովհ. ՃԴ. 3

Այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համ-  
բարձաւ, այսպէս պիտի գայ, ինչպէս

տեսաք Ասոր երկինք երթալը:

Գործ. Ա. 11

Տէրը ինք ազդարարութեան հրամանով,  
հրեշտակապետին ձայնովը, ու Աստու-  
ծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, եւ  
Քրիստոսով մեռածները առաջ յարու-  
թիւն պիտի առնեն: Ետքը մենք ալ որ  
ողջ մնացած ենք, անոնցմով մէկտեղ  
պիտի յափշտակուինք Տէրոջը առջեւ  
ելլելու օդին մէջ, եւ այնպէս յաւիտ-  
եան Տէրոջը հետ պիտի ըլլանք:

Ա. Թես. Դ. 15, 16

Երբ Անիկա յայտնուի Անոր պէս պի-  
տի ըլլանք, վասնզի զԱնիկա պիտի  
տեսնենք՝ ինչպէս որ է:

Ա. Յովի. Գ. 2

Ուրեմն արթուն կեցէք, վասնզի չէք  
գիտեր թէ ո՞ր ժամուն ձեր Տէրը կու-  
գայ . . . դուք ալ պատրաստ կեցէք.

քանզի Որդին մարդոյ կուգայ այնպիսի  
ժամու մէջ որ դուք չէք կարծեր:  
Մատթ ԻՂ. 42, 44

Ահա Ես շուտով կուգամ, եւ իմ վարձքս  
ինծի հետ է ամէն մէկուն իր գործին  
համեմատ հատուցանելու:

Յայտ. ԻԲ. 12

Ամէն, եկուր, Տէր Յիսուս:

Յայտ. ԻԲ. 20

100

«Ազգային գրադարան



NL0156179

Armenian WOS 1921-88